



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՏԱՇԵՆ  
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Առատաշեն համայնք  
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Առատաշեն, (0231)62328 aratashen.armavir@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

08 ՀՈՒՆԻՍԻ 2020թվականի N 27-Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ  
2019ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի ԹԻՎ 42-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով, «Բյուջետային համակարգի» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ կետով, հաշվի առնելով ՀՀ Արդարադատության նախարարության պետական փորձագիտական եզրակացությունը և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

**ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Առատաշեն համայնքի ավագանու 2019թվականի դեկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Առատաշեն համայնքի 2020թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 42-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -7


Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՀԱՐՈՆՅԱՆ ՆԵԼԼԻ  
ԵՐԱՆՅԱՆ ՍԵԴՐԱԿ



ԽԱԶԱՏՐՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ  
ՂԱԶԱՐՅԱՆ ՄԵՐԻ  
ՄԱԿԱՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ  
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԳԱՅԱՆԵ  
ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՀՈԿԱՆՆԵՍ



Համայնքի ղեկավար՝



ՎԱՀՐԱՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ  
ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի ԹԻՎ 42-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ  
ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍ

1. 11.1.2-ի (Պահուստային ֆոնդ)-ի 4891 հոդվածից
  - 1) պակասեցնել 1700.0 հազ.դրամ
  - 2) 900.0 հազ. դրամ կատարել հատկացում ֆոնդային բյուջե,
  
2. 01.1.1 (Առատաշենի համայնքապետարան)-ի
  - 1) 5122 հոդվածին ավելացնել 900.0 հազ. դրամ
  - 2) 4269 հոդվածին ավելացնել 1500.0 հազ. դրամ
  - 3) 4239 հոդվածին ավելացնել 1000.0 հազ. դրամ
  - 4) 4251 հոդվածից պակասեցնել 800.0 հազ. դրամ

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՏԱՇԵՆ  
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 08-Ի <<ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ  
2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի ԹԻՎ N42-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> N27-Ն ՈՐՈՇՄԱՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Առատաշեն համայնքի  
ավագանու 2020թվականի հունիսի 08-ի <<Հայաստանի Հանրապետության  
Արմավիրի մարզի Առատաշեն համայնքի 2019թվականի դեկտեմբերի 23-ի թիվ  
42-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին>> թիվ 27-Ն որոշման  
ընդունումը պայմանավորված է «Տեղական ինքնակառավարման մասին»  
Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետի  
պահանջով և դրա անհրաժեշտությունը կայանում է նրանում, որ այն ուղղված է  
համայնքի զարգացմանը նպաստելուն՝ բյուջետային համակարգի  
միասնականությունն ապահովող բյուջետային գործընթացի կազմակերպման  
համաձայնեցված սկզբունքների, բյուջետային դասակարգման, հաշվառման և  
հաշվետվության միասնական մեթոդաբանության հիման վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

## Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Առատաշեն համայնքի ավագանու 2020թվականի հունիսի 08-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Առատաշեն համայնքի 2019թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 42-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N27-Ն որոշման ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու անհրաժեշտությունը չկա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ



Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ